

Հայերենի հնդեվրոպական ակունքները

Հրաչ Մարտիրոսյան

1.1 Բառային և քերականական համադրումներ

(1) Հայերենը ցեղակից է հնդեվրոպական լեզուներին, ինչպիսիք են՝ խեթերենը, սանսկրիտը, ավեստերենը, հունարենը, լատիներենը, գոթերենն ու ռուսերենը: Հիմնական բառաֆոնդի համադրումներ.

անուն, բրբռ. *անում* ‘անուն’. հուն. *ὄνομα*, լատ. *nōmen*, սանս. *nāman-*, գոթ. *namo*
աստղ, *աստեղ*-. հուն. *ἀστήρ*, ավեստ. *star-*, գոթ. *stairno*, լատ. *stella*, խեթ. *hasterza*
դուռ ‘դուռ’. սանս. *dvār-*, հուն. *θύρα*, լատ. *foris*, վալիս. *dor*, անգլ. *door*, հին եկղզ. սլավ. *dvǫrъ*

դուստր ‘դուստր’. սանս. *duhitār-*, հուն. *θυγάτηρ*, լիտվ. *duktė*

կին, *կանայ*-. ‘կին’. հին ավեստ. *gənah-*, հուն. *γυνή, γυναι-*, գոթ. *qino*

կով ‘կով’. սանս. *gauḥ* ‘կով, ցուլ’, լատվ. *gūōvs* ‘կով’, հին եկղ. սլավ. *gov-ę-do*

սիրտ ‘սիրտ’. հին եկղզ. սլավ. *srъdъce*, լիտվ. *širdis*, գոթ. *hairto*

(2) Հնչյունական սիստեմատիկ և հետևողական համապատասխանություններ.

● Հնդեվրոպական բառակազմային *s-ն ընկնում է.

◆ հայ. **աղտ** ‘աղ’ vs. անգլ. *salt* ‘աղ’;

◆ հայ. **ևւթն** ‘յոթ’ vs. սանս. *saptā*, լատ. *septem* և այլն.

● Հնդեվրոպական բառակազմային *p-ն դառնում է հայ. *h-*, իսկ միջձայնավորային *-t-ն ընկնում է.

◆ **հայր** ‘հայր’. սանս. *pitā*, հուն. *πατήρ*, լատ. *pater*, հ. վ. գերմ. *fater*, թոխ. *F pācer*

◆ **հերու** ‘հերու, անցած տարի’. հուն. *ἑρῶσι*, դոր. *ἑρῶσι*, սանս. *parut* ‘հերու’

◆ **չորք** ‘չորս’. սանս. *catasras*, պարսկ. *čahār*, լատ. *quattuor*, հ. եկղ. սլավ. *četyre*

(3) Նշանակալից են նաև քերականական համապատասխանությունները: Երկու օրինակ.

(1) հայերեն ուղղական հոլով **հայր** ‘հայր’ < հնդեվր. **ph₂tēr* = հուն. *πατήρ*, լատ. *pater*;

սեռական հոլով **հայր** < հնդեվր. **ph₂tr-ós* = հուն. *πατρός*, լատ. *patris*;

գործիական հոլով **հարք** < **ph₂tṛ-bʰi-*, հմմտ. սանս. *hoḡas* ‘տրական *pitṛ-bhyas*;

(2) հայերեն սահմանական ներկա **բերեմ** ‘բերում եմ’ < հնդեվր. **bʰer-e-*: սանս. *bhāratī*, լատ. *ferō*, հուն. *φέρω*;

3sg անցյալ կատարյալ **եբերք** ‘բերեց’ < հնդեվր. **é-bʰer-et* = սանս. *á-bhar-at*, հուն. *ἔ-φερ-ε*.

(4) Հարացույցներ


	Proto-IE	Armenian	Sanskrit	Greek	Gothic	OCS
1sg	*b ^h ér-o-h ₂	berem	bhárāmi	φέρω	baira	berǫ
2sg	*b ^h ér-e-si	beres	bhárasi	φέρεις	bairis	beresi
3sg	*b ^h ér-e-ti	berē	bhárati	φέρει	bairiþ	beretǫ
1pl	*b ^h ér-o-me-	beremkʻ	bhárāmas(i)	φέρομεν	bairam	beremǫ
2pl	*b ^h ér-e-te(-)	berēkʻ	bháratha	φέρετε	bairiþ	berete
3pl	*b ^h ér-o-nti	beren	bháranti	φέρουσι(v)	bairand	berǫtǫ

	Proto-IE	Arm.	Hitt.	Skt.	Greek	Latin	Gothic	OCS
1sg	*h ₁ és-mi	em	ēšmi	ásmi	εἰμί	sum	im	jesmǫ
2sg	*h ₁ és-si	es	ēšši	ási	εἶ / ἐσσί	es	is	jesi
3sg	*h ₁ és-ti	ē	ēšzi	ásti	ἐστί(v)	est	ist	jestǫ
1pl	*h ₁ s-mé-	emkʻ		smás	ἐσμέν	sumus	sijum	jesmǫ
2pl	*h ₁ s-té-	ēkʻ		sthá	ἐστέ	estis	sijup	jeste
3pl	*h ₁ s-énti	en	ašanzi	sánti	εἰσί(v)	sunt	sind	sǫtǫ

1.2 Հնդեվրոպական նախահայրենիքը և տրոհումը

(5) Հնդեվրոպական ցեղակից լեզուներն առաջացել են մի նախամայր լեզվից, որ պայմանականորեն կոչում ենք **հնդեվրոպական նախալեզու**: Նախալեզվի տրոհումը սովորաբար թվագրվում է մ.թ.ա. V-IV հազարամյակներով:

(6) Նախալեզվի կրողների նախահայրենիքի (homeland, Urheimat) տեղանշման խնդիրը վիճահարույց է: Տարբեր մոդելներ. Սև ու Կասպից ծովերից հյուսիս (տե՛ս Mallory 1989), Հայկական լեռնաշխարհ (Гамкрелидзе / Иванов 1984), Թուրքիայի հարավ (Renfrew 1987) և այլն: Տես համադրական քարտեզը՝ Mallory 1989, 144):



80 The modern 'consensus': A map of some of the solutions to the Indo-European homeland problem proposed since 1960.

(7) Վաղնջահայերենը, հնդեվրոպական նախալեզվի տրոհման ընթացքում և դրան հաջորդող փուլերում (մ.թ.ա. IV-III հազարամյակներ), առավելապես մերձավոր է եղել հունական և հնդիրանական ճյուղերին և հավանաբար գտնվել է նրանց միջև, ընդ որում արևմուտքից նրան հարևան էր հունականը, իսկ արևելքից՝ հնդիրանականը:

(8) Առաջավորասիական մոդելի բարդությունները. Երկու՝ առաջավորասիական և հյուսիսային (վաղ և ուշ փուլեր) մոդելների համադրման փորձեր:

1.8 Մ.թ.ա. 1-ին հազարամյակ. հայերենը և ուրարտերենը

(9) Երկար ժամանակ կարծում էին, թե հայերենի կրողները Հայկական լեռնաշխարհ գաղթել են մ.թ.ա. 6-րդ դարում՝ Ուրարտուի անկումից հետո: Սակայն ուրարտական աղբյուրներում հայերեն բառերի առկայության հիման վրա այդ տեսակետը կարելի է համարել հնացած: Ահա մի քանի օրինակ.

(10) ուրարտ. *aršibi-* < հայ. **արծուի** ‘արծիվ’ < **h₂rǵipió-*, հմմտ. սանս. *rjipyá-* ‘արծվի մի մակդիր’, ռ. ‘արծիվ’ և այլն;

- ուրարտ. *abili-d(u)* < հայ. **աւել** < **h₃bʰel-*, հմմտ. հուն. *ὀφείλλω* ‘to increase, enlarge, augment, advance’;
- ուրարտ. *šūā* [čó(w)ə] ‘(inland) sea’ < հայ. **ծով** < հավանաբար **gobʰ-*. իռլ. *gó* ‘ծով’ (հմմտ. իռլ. *bó* vs. հայ. *կով*), գուցե և հին իսլ. *kaf* ‘ծով’;
- ուրարտ. *qaburzani* ‘կամուրջ’ vs. հայ. **կամուրջ**, *ա-*հիմք ‘կամուրջ’ < **gʷ(e)m/bʰurjeh₂*, հմմտ. հուն. *γέφωρα* f. ‘կամուրջ’:

(11) Ուրարտերենում հայկաբանությունները սահմանափակված չեն հասարակ բառերով.

► Ձևաբանություն.

- Ուրարտ. **me(i)** ձևությոն արտացոլում է հայերեն արգելական **մի** մասնիկը < հնդեվր. **meh₁*, հմմտ. սանս. *mā*, վրեստ. *mā*, հուն. *μή*, ալբ. *mo*, թոխ. ԱԲ *mā*.
- Ուրարտ. շաղկապ **e-’a** ‘և, նույնպես, կամ’, (խոռիերենում չկա) կարող է ընթերցվել *e-wi* և նույնացվել հայ. **և** շաղկապին < Հ.-Ե. **h₁e/opi* ‘by, at, on, to’, հմմտ. Հուն. *ἐπι*, *ἐπί* ‘on it, at it, by, at the same time’ և այլն:

► Տեղանուններ.

- ուրարտ. **Tuarašini hūbi** և հայերեն **Տուարած-ա-տափ**

► ^{KUR}*Etiuni/Etiuhī*, 9-7-րդ դարերի ուրարտական աղբյուրներում վկայված երկիր, որ տարածքով հիմնականում համապատասխանում է Մեծ Հայքի Այրարատ նահանգին

(12) Հայերեն **գինդ** ‘գյուղ’ և ուրարտ. **ueli** ‘ամբոխ, բանակ’

**gel-i-*: *գինդ* ‘գյուղ’, սեռ. *գեղ-ջ* < **wel-i-óh*; հմմտ. հուն. *ὄλιη*, դոր. *ὄλια* ‘մարդկանց հավաքախումբ’, (*φ*)*όλις* մակբ. ‘in crowds, in plenty’ < **ul̥-i-s*

- Իմաստային տեղաշարժ ‘ամբոխ’ > ‘ցյուղ’. հմմտ. սանս. *grāma-* ‘գորախումբ, գյուղական համայնք’, լեհ. *gromada* ‘բազմություն, կույտ, գյուղ. համայնք’; քրդ. *gund* ‘ցյուղ’ vs. պարսկ. *gund* ‘ամբոխ, բանակ’ (հմմտ. հայ. *գունդ*)

(13) Ուրարտական հիերոգլիֆային գիրը. Կարագյոզյանի վերծանման փորձը

Արձանագրություն մի բրոնզե ամանի վրա. ընթերցում է *Ur-sa-a* (Rusa) և երեք նշաններից առաջինը մեկնաբանում որպես ‘ձի’ նշանակող գաղափարագիր, հմմտ. հայ. *որս*. Սակայն.

- Հայ. *որս* բառը նշանակում է ‘որս’ կամ ‘որսի կենդանի, բայց ոչ երբեք ‘ձի’:
- Խորենացի 2.կա. *Եթե դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս* “If you mount for (or go) hunting” (*ի* + հայցական նպատակի համատեքստում, հմմտ. Խորենացի 2.թ.՝ *հեծանել յորս և ի պատերազմունս*):
- Կապ չունի անգլ. *horse* (< **k̑(e)rs-*, հմմտ. լատ. *currō* ‘վազել’, հին իռլ. *carr* ‘փոխադրամիջոց’, մ.վ.գերմ. *hurren* ‘շտապել’ են):

(14) Արևմտահայերեն *հորսակ* ‘կեսոր’:

Կ. ենթադրում է, որ *որս* բառի ‘ձի’ (ենթադրյալ) իմաստը > ‘արև’, սա էլ > ‘կեսոր’

Սա լիովին անտեսում է ներքին ստուգաբանության մեթոդը: Իրականում *հորսակ* ‘կեսոր’ բառն անբաժանելի է հետևյալ բրբռ. բառերից.

Պոլիս *օհարսագ*, Աղաբազար *օվարսագ*, Եվդոկիա *օրասսագ*, Ռոդոսթո *օրարսագ*, Ասլանբեկ *օրարսագ* և այլն. բոլորը նշանակում են ‘կեսոր’ և հստակ արտացոլում են գրաբար *օր-հասարակ* բաղադրությունը (*օր* ‘օր’ + *հասարակ* ‘կես’):

Մշակութաբանական ակնարկ

(15) Վիշապակոթողներ



ՀՐԱՉ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Լեյդենի համալսարան)

hrech.martirosyan@gmail.com

2014-2016, Լեյդեն / Վիեննա